ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՋԵՐՄՈՒԿ
ՄԱՐԶ	ՎԱՅՈՑ ՁՈՐ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ջերմուկ

Բնակավայրը հիշատակվում է սկսած XIII դարից՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Նահանգին Սիսական» աշխատության մեջ: Սակայն քաղաքի տարածքում գտնվող հին կիկլոպյան ամրոցի և VIII դարի եկեղեցու ավերակներն ու մնացորդները խոսում են այն մասին, որ հանքային ջրերի ակունքների մոտ գտնվող Ջերմուկ բնակավայրը գոյություն է ունեցել շատ վաղուց:

Ջերմուկի տեղում նախկինում եղել է հայկական Ջերմուկ գյուղը: Հետագայում այն օտարեկրացիների կողմից ավերվել է և նրա փոխարեն նոր գյուղ են կառուցել, որը թարգմանաբար կոչել են Իստիսու: Ջերմուկ է վերանվանվել 1924 թվականին:

Ջերմուկում հայտանաբերված հին ավազանի մնացորդները վկայում են, որ միջին դարերում մարդիկ օգտվել են ջերմուկներից: Հին ավազանը կարգավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսերին, երբ Ջերմուկը մտավ Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի մեջ:

Համայնքի կազմում է նաև 3 կմ հարավ-արևմուտքում գտնվող Կեչուտ գյուղը, իսկ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2016 թվականի փոփոխությամբ Ջերմուկ քաղաքային համայնքին են միացել նաև Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղերը:

Արփայի մեջ թափվող վտակի գետաբերանի մոտ առաջացել է մի քանի տասնյակ մետր բարձրության հանքային ջրվեժ: Ջերմուկը հայտնի է Արփայի հատկապես աջ և ձախ ափերին գտնվող 36 բուժիչ տաք աղբյուրներով՝ ջերմուկներով, որոնք ունեն հիդրոկարբոնատա-սուլֆատային բաղադրություն: Շրջակայքում կան նաև «Նարզան» տիպի ջուր, բուժիչ ցեխ, ապակու հումք (կվարցիտներ):

Ջերմուկի կազդուրիչ հանքային ջրերը դեռ շատ հնուց օգտագործվել են ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ Սյունաց իշխանների կողմից՝ ամենատարբեր հիվանդությունների բուժման նպատակով: Այդ մասին են վկայում միջնադարում կառուցված լողավազանի մնացորդները, որոնք վերակառուցվել և վերականգնվել են 1860-ական թվականներին ցարական պրիստավ Գևորգ Խանագյանի կողմից, և այժմ էլ ժողովրդի կողմից լողավազանը կոչվում է «Պրիստավի գյոլ»: Չնայած պատմական հարուստ անցյալին, այսօրվա նոր քաղաքի հիմքը դրվել է միայն 1940 թվականին՝ առաջին առողջարանի կառուցման ավարտով:

Հետագա տարիներին Ջերմուկը կառուցվել ու կառուցապատվել է, ստեղծվել են բոլոր հնարավորությունները ինչպես բնակչության, այնպես էլ հանգստացողների ակտիվ հանգստի, առողջության վերականգնման և զբոսաշրջության համար:

Ջերմուկի առաջին գլխավոր հատակագիծը կազմվել է 1945 թվականին ճարտարապետ Պ.Մսրյանի կողմից, 1952 թվականին՝ երկրորդը՝ ճարտարապետ Փ.Մանուկյանի կողմից, իսկ վերամշակվել է 1960-1962 թվականներին, որով և սկսվել է Ջերմուկի կառուցապատման նոր փուլը: Արփայի կիրճի վրա 1975 թվականին կառուցված մեծ կամուրջը հնարավորություն է տվել բնակելի շինարարությունը կենտրոնացնել ձորի ձախափնյակում՝ երկու միկրոշրջանների բնակիչների համար: 1967 թվականին քաղաքը ձեռք է բերում հանրապետական նշանակության քաղաքի, իսկ 1970 թվականին՝ համամիութենական նշանակության առողջարանի կարգավիճակ: 1980-ականներին քաղաքն ուներ շուրջ 10 000 բնակիչ, շուրջ 2 000 մահճակալով առողջարանների ու պանսիոնատների ցանց՝ ակտիվ հանգստի և բուժման համար նախատեսված բոլոր ենթակառուցվածքներով ու ծառայություններով: Օբյեկտիվ պատճառներով առողջարանային քաղաքի ակտիվ կյանքը 1990-ականներից մեծ տեղատվություն ապրեց, որը սկսեց աշխուժանալ 1990-ական թվերի վերջերից:

Կեչուտ

Կեչուտ (Գեչյուտ, Գիշար, Կեչառ, Կուշչի, Կուշչիբելակ, Ղուշչի, Ղուշչիբալաք) գյուղը Մեծ Հայքի Սյունիք նահանգի բնակավայրերից է եղել: Գյուղի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն պատմագրությունը վկայում է, որ գյուղը, որպես բնակավայր, գոյություն է ունեցել մ.թ.ա. երկրորդ հազարամյակում: 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Վայոց ձորի գավառի 92 գյուղերի ցուցակում Կեչուտը նշում է Երերունք և Ջերմուկ բնակավայրերի կողքին՝ 6 միավոր հարկաբաժնով, (Ստ. Օրբելյան Պատմություն նահանգին Սիսական, Երևան, Սով.գրող 1986, էջ 396) և ավելացնում՝ գյուղն ունի հազար տարուց ավելի պատմություն: Պատմիչը նաև նշում է, որ 1008 թվականին Կեչուտը մեծ գյուղ էր: Տասնութերորդ դարում այս սարերը զավթած մի թուրք բեկ գյուղը կնքեց իր ճաշակին համապատասխան՝ Կուշչի, Ղուշչի, Ղուշչիբալաք, որ թարգմանվում է բազեպան (բազեպանը թագավորի, իշխանի, նախարարի տան պաշտոնյա էր, Բզնունի՝ բազեպանի տոհմը), բազե՝ դաստակի վրա:

Բարբարոսները հաճախ են ավերել Վայոց ձորի բնակավայրերը, կողոպտել եկեղեցիները, դպրության օջախները: Գավառի շեների կազմում Կեչուտը նույնպես ենթարկվել է բոլոր փորձություններին: 1604 թվականին Պարսկաստանի Շահ-Աբբասը բռնագաղթի ենթարկեց նաև Վայոց ձորի բնակչությանը, քշեց իր երկիրը: Կեչուտի բնակիչների նախնիներին, գավառի մյուս տարագիրների հետ բնակեցրին Սալմաստի և Խոյի գավառներում: Ռուս-պարսկական 1828թ. պատերազմում Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը և Արցախը անցան Ռուսական կայսրության տիրապետության տակ, որի շնորհիվ հարյուր-հազարավոր հայ ընտանիքներ վերադարձան իրենց նախնիների երկիր: Կեչուտ գյուղը 1828 թ.-ից մտել է հայկական մարզի մեջ: 1849-1917 թվականներին Երևանի նահանգի Նախիջևան գավառի, 1920թ. խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ Շարուր-Դարալագյազի, իսկ 1931թ. նախկին Ազիզբեկովի շրջանի, ապա 1996թ. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերից է: Կեչուտ է վերանվանվել 12.11.1946թ. հրամանագրով:

Կեչուտի տարածքում կան և պահպանվում են հնէաբանական նյութեր, որոնք բնակավայրի կառուցման ժամանակաշրջանը հասցնում են մինչև նոր քարե դար: Դրանք մերձակա տարածքում եղած հին բնակավայրերի հետքերն են՝ շրջակա լեռներում պատկերված հարյուրավոր ժայռապատկերներ, կործանված խաչքարեր, հողածածկ գերեզմաններ: Գյուղի մեջ մինչև անցյալ դարի քսանական թվականները պահպանվել էին երեք եկեղեցիներ, որոնք իրենց ճարտարապետական ոճով պատկանում են համապատասխանաբար 7-13-17-րդ դարերին: Ավելի հները կիսավեր էին: 7-րդ դարի եկեղեցին գտնվում էր գյուղի արևմտյան եզրին՝ Արփա գետի մերձափնյա բլրակի վրա: Բազիլիկ շենք էր: Եկեղեցու շուրջը շատ հին գերեզմանատուն կար, որտեղ կանգնած է եղել հնագույն մի խաչքար՝ 886թ. արձանագրությամբ: Այս և շատ խաչքարեր 1930-ական թվականներին տարել են և դրանցով Արփա գետի վրա կամուրջը նորոգել: 1981թ. կամուրջը լճի տակ մնալու պատճառով քանդվեց, և նշված խաչքարը «Էլեկտրոն» պանսիոնատի տնօրեն Վիլսոն Առաքելյանը տեղափոխեց և տեղադրեց առողջարանի հրապարակում: Երկրորդ եկեղեցին գտնվում էր գյուղի մեջ՝ նախորդից քիչ դեպի արևելք, նախկին դարբնոցի մոտ: Այդ խոշոր շենքից պահպանվել էին արևելյան ծայրը՝ կիսակլոր, աբսիդի և արևմտյան պատի հետքերը: Եկեղեցու շուրջը եղել է մեծ գերեզմանոց՝ բազմաթիվ խաչքարերով, որոնք նույնպես ամբողջովին քանդվել են: Եկեղեցին և գերեզմանոցը պատկանել են 13-14-րդ դարերին: Երրորդ եկեղեցին գտնվում էր նախկին գյուղի կենտրոնական մասում՝ աղբյուրից քիչ վերև: Բավականին մեծ շենք է եղել՝ եռանավ բազիլիկ ձևով: Ներսում ունեցել է չորս մույթեր, ծածկը եղել է թաղակապ, շարված էր կիսատաշ որձաքարով, պատերի մեջ օգտագործել էին հին գերեզմանաքարեր և քանդակազարդ խաչքարեր: Ավերակ վիճակում էր՝ ներսը լցված հողով: Այս եկեղեցին էլ հավանաբար 17-18-րդ դարերի կառույց էր:

Կեչուտի ջրամբարը գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկ քաղաքից 10 կմ հեռավորության վրա: Ջրամբարի շինարարական աշխատանքները սկսվել են 1967 թվականին: Կառուցվել է 1981 թվականին: Ընդհանուր ծավալը 8 միլիոն մ3 է, օգտակար

ծավալը՝ 3,5 միլիոն մ3, հայելու մակերեսը 1,2 կմ2: Պատվարը քարալիցքային է՝ մոտ 50 մ բարձրությամբ, 230 մ երկարությամբ: Սնվում է Արփա գետից և մթնոլորտային տեղումներից: Կեչուտի ջրամբարը «Արփա-Սևան» հիդրոտեխնիկական կառույցի գլխային հանգույցն է, որից սկիզբ է առնում դերիվացիոն (ջրաթեք) թունելը: Կեչուտի ջրամբարի կողքին է գտնվում Ս.Գայանե կույսի անունը հավերժացնող մատուռը: Ս. Գայանեն գմբեթավոր փոքրիկ մատուռ է, ունի մեկ խորան, մկրտության ավազան և արևմտյան կողմից երկաթյա դուռ: Մատուռը լուսավորվում է 9 փոքրիկ լուսամուտների շնորհիվ: Ս. Գայանե մատուռը կառուցվել է 2007թ. Ալիկ Հովհաննիսյանի բարերարությամբ և ունի իր արձանագրությունը. «Կառուցաւ զմատուռս Ս. Գայանեայ բարերարութեամբ Ալիկ Հովհաննիսեանի և թող Աստուած առավելով զգործս բարիս ի Հայաստան աշխարհի ճարտարապետ Լևոն Օհանյան վարպետ Յուրի Առաքելյան»: Մատուռն օծվել է 2007թ. նոյեմբերի 17-ի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով:

Գնդեվազ

Գնդեվազը երեք կողմից շրջապատված է գեղեցիկ անտառներով, ոչ այնքան բարձր սարերով և մի կողմից Արփա գետը տանող խորը ձորով: Գնդեվազը պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց ձորի գավառի հնագույն բնակավայրերից է: Մեզ հասած առաջին գրավոր հիշատակությունը Սիսական տան մեծ պատմիչ Ստեփանոս Օրբելյանինն է, ուր ասվում է, որ Սյունաց Սոփի իշխանուհին Վայոց ձորի Գնդեվանք եկեղեցին կառուցելու հետ հիմնել է նաև համանուն գյուղը և նվիրել վանքին: Գնդեվանքը միջնադարյան եկեղեցական համալիր է համարվում: Գտնվում է Գնդեվազից դեպի արևմուտք, Արփա գետի ձախ ափին: Կառուցվել է 931-938 թվականներին, Սյունյաց իշխանաց իշխան Սմբատի կնոջ՝ Սոփի (Սոփիա) իշխանուհու աջակցությամբ: Նա Վասպուրականի գահերեց իշխան Գրիգոր-Դերենիկ Արծրունու դուստրն էր, Գագիկ թագավորի քույրը: Իշխանուհին հայտնի էր իր շինարարական գործունեությամբ: Գնդեվանքի արևմտյան պատին առկա է իշխանուհու արժանահիշատակ գործունեության վկայությունը: Արձանագրությունը ասում է հետևյալը. Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա և եդի ակն ի վերայ:

Բարեպաշտ տիկին Սոփին, երբ առաջին անգամ գնում է Գնդեվանք կոչվող խորաձոր վայրը՝ մենակյացների մոտ ուխտի, տեսնում է սուրբ նահատակների նշխարներ, միաժամանակ տեղեկանում, որ այդտեղ բժշկություններ են կատարվում: Ուստի նա անմիջապես բերել է տալիս ճարտար քարագործ վարպետներին և սկսում է շինարարությունը: Հիմնադրվում է որպես ձորի ճգնավորների մենաստան: Առաջնորդ է նշանակվում Սարգիս քահանան, իսկ շինարարության ղեկավարն էր նկարիչ Եղիշե երեցը: Վանքը ճգնավոր Սուփան Գնդունու անունով կոչվել է Գնդեվանք: Կա նաև մեկ այլ տարբերակ, ըստ որի իշխանուհին վաճառել է իր ականջի գինդերը, որպեսզի կարողանան վերջացնել եկեղեցու շինարարական աշխատանքները, և այդ գինդերի համար վանքը կոչվել է Գնդեվանք:

1604 թվականին պարսից շահ Աբբասը ավերել է Գնդեվանքը և Գնդեվազ գյուղի բնակիչներին տեղահան արել: 1691 թվականին վանահայր Պետրոս վարդապետը նորոգել է վանքի եկեղեցին և գավիթը, վանքը շրջապատել աշտարակավոր պարիսպով և նրան կից կառուցել բնակելի ու տնտեսական շինություններ: Ուշագրավ է նաև համալիրի հարավային կողմում սեղանատունը, որը մեծ դահլիճ է՝ նկուղով, օժանդակ սենյակներով ու կրակարանով:

Գնդեվազի պատմամշակույթային կոթողներից է նաև Սուրբ Ստեփանոս եկեղեցին, որը կառուցվել է 931-936 թվականներին: Կառույցը սրբատաշ բազալտով է ,քառախորան, արտաքուստ խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքով:Եղիշե երեցը եկեղեցու ներսը զարդարել է որմնանկարներով, որոնցից խորանի պատին պահպանվել է Քրիստոսի պատկերի մի փոքր հատված:Ներսում ՝ գմբեթի առագաստների վրա կան չորս ավետարանիչների բարձրաքանդակները:

999 թվականին վանահայր Քրիստափորը կառուցել է եկեղեցու արևմտյան գավիթը:Վերջինի հյուսիսային պատի երկայնքով տեղավորված են ուղղանկյուն հատակագծով երկու սենյակներ:Արևմտյան սենյակը ծառայել է որպես գրատուն:

Գնդեվազում պատմական հնություններից են նաև Սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցին (1686թ.) և 11-րդ դարի ջրանցքը: Ջրանցքը կառուցվել է 1008թ. Սյունիքի Վասակ թագավորի ժամանակ: Համարվում է միջնադարի ջրաշինական հազվագյուտ կառույց, որը 1960 թվականի հիմնարար նորոգումից հետո ոռոգում է Գնդեվազ գյուղի և Ջերմուկի քաղաքամերձ հողատարածքները: Սկիզբ է առնում Որոտանի ավազանից: Երկարությունը 15.4 կմ է, ջրթողունակությունը՝ 0.7 մ3/վ: Այն ժամանակներում ջրանցքի ջրով ոռոգվել են մոտ 400 հա վանքապատկան հողերը,այժմ՝ մոտ 1000հա:

Գնդեվազից 2 կմ հարավ-արևմուտքում է գտնվում Գնդեվանքի համալիրը (10-17) դարեր և իջևանատունը (10-13) դարեր, գյուղի հյուսիսային մասում՝ (17-18) դարերի պարիսպը, 1 կմ հյուսիս՝ Սուրբ Խաչ մատուռը 19 դար, ավերակ եկեղեցին 17-18 դարեր, բերդի ավերակներ՝ ուշ միջնադար և 11-19 դարերի խաչքարեր:

Հերհեր

Հերհերն (հին Երերեր, Ծաղկաշեն) իր բնությամբ և շրջակայքով հանդերձ արտասովոր գեղեցիկ է: Օտարերկրացիները այն հաճախ են անվանել «Երկրային դրախտ»: Հերհեր գյուղի կրթամշակութային հիմքերը դրվել են դեռևս վաղ միջնադարում: Զաքարյանների իշխանապետության շրջանում (12-13-րդ դարեր) այն եղել է Օրբելյանների վասալ Շահուռնեցիների նստավայրը: Գյուղից հյուսիս-արևելք գտնվող Սուրբ Սիոն մենաստանը հռչակված է եղել իր կրթական գործունեությամբ: Ըստ վկայությունների՝ Հերհերի կրթական համալիրը բեղուն գործունեություն է ծավալել՝ լինելով մեծ ճանապարհներից հեռու և ամրացված ժայռի վրա: Գյուղի տարածքում կան բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ՝ վանքեր, մատուռներ, խաչքարեր և այլն: Ինչն էլ վկայում է, որ տարբեր դարերում, կախված ժամանակի հասարակական-քաղաքական վայրիվերումներից, գյուղում մշակութային կյանքը այդուհանդերձ պահպանվել է: Ավելի ուշ շրջանում՝ Շահ-Աբասի արշավանքների ժամանակ գյուղը ենթարկվել է տեղահանության, սակայն գյուղացիների մի մասը փրկվել է բռնագաղթից՝ ապաստանելով գյուղից 3 կմ հյուսիս գտնվող քարանձավում: Նոր ժամանակներում գյուղի սոցիալական կյանքում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո գյուղ են ներգաղթել Խոյի և Սալմաստի գավառներից: Այդ պատճառով գյուղի բնակչության մեջ տարածված են եղել երեք բարբառ: Խոսվածքում առավելություն ունի «Կըլա» ճյուղը, որն Արարատյան բարբառի ենթաճյուղ է: Գյուղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1925թ. ստեղծվել է գյուղի առաջին պետական դպրոցը՝ Հերհերի յոթնամյա դպրոցը: 1939թ. դպրոցը վերածևավորվել է որպես միջնակարգ դպրոց, իսկ 1941թ. տվել է իր առաջին շրջանավարտները: Ներկայումս գյուղի հանրակրթական դպրոցում սովորում է 89 աշակերտ:

Հերհեր գյուղի ոլորուն ճանապարհը իջնում է դեպի ձոր, որտեղ էլ մի մեկուսի ժայռի գլխին, երկու ձորերով եզերվելով, բազմած է Հերհերի վանքը (գյուղից 1 կմ հյուսիս-արևելք): Այս բարձրունքը բոլոր կողմերից պաշտպանված է ձորերի բարձր քարափներով, իսկ խոցելի-թույլ տեղերը ամրացված են պարիսպներով, որոնք այդ վայրը դարձնում են անառիկ բնակատեղի: Վանքը հիմնադրվել է վաղ միջնադարում, ստույգ հայտնի չէ երբ, բայց հիշատակվում է 8-րդ դարից սկսած: Վանքի շրջակայքում կան մի շարք գերեզմանաքարեր ու խաչքարեր: Նկատվում են առանձին շենքերի հետքեր: Վանքի հնագույն կառուցվածքը՝ Ս. Սիոն եկեղեցին (կոչվում է նաև Սբ. Սիոն մենաստան) կառուցված է կոպտատաշ, կիսամշակ ավազաքարից: Եկեղեցին ունի հայ ճարտարապետության համար եզակի հորինվածք: Ներսից սվաղված է և ունի միանավ թաղածածկ: Հատակագիծն արտաքուստ քառանկյունի է ներսից՝ արևելյան և արևմտյան ծայրերն ունեն կիսակլոր ապսիդներ, որոնք եզակի են

հայկական ճարտարապետության մեջ: Արևելյան կողմի ապսիդի մեջ շինված է ցածրիկ բեմ: Ծածկը թաղակապ է, երկթեք տանիքով: Արևմտյան և հարավային կողմերից ունի մուտքեր: Հարավայինը հավանական է բաց են արել երկրորդ եկեղեցին կառուցելու միջոցին: Տանիքը պատած է մաքուր հղկած սալաքարերով. նկատելի են վերանորոգման հետքեր: Նրա ճարտարապետական ձևերը խաչաձև և բազիլիկատիպ ձևերի միացում է, որը ենթադրել է տալիս, թե եկեղեցին կարող է կառուցված լինել 8-9-րդ դարերում: Նրան հյուսիսից կից է փոքրիկ թաղածածկ մատուռ, որի ծածկը թաղակապ է, արևելյան կողմից կիսակլոր ապսիդով: Մուտքը հարավային կողմից է՝ Սիոն եկեղեցու միջից: Վերջինիս հարավից կից է Ս. Աստվածածին եկեղեցին, փոքրիկ շինարարական կառուցվածք, որը, ըստ հարավային պատի ընդարձակ արձանագրության և արևմտյան ճակատին եղած թվականին համաձայն, կառուցվել է Մագիստրոսի թոռ, Վասակի որդի Շահուռնեցի իշխանը 1282-1283թթ: Սրբատաշ քարից կառուցված եկեղեցին քառանկյունի հատակագծով է, միանավ, թաղածածկ, իսկ արևելքում զույգ կիսաշրջանաձև խորաններով (ապսիդներով), արևմտյան ճակատին ճանկերում խոյ բռնած արծվի բարձրաքանդակով: Երկու մուտքերից մեկը բացվում է արևմտյան, իսկ մյուսը՝ հյուսիսային կողմից և տանում է դեպի հին եկեղեցին: Հարուստ է վիմական արձանագրություններով՝ նվիրատվական բովանդակությամբ, որոնց վրա կան 1282, 1283, 1259, 1308, 1317, 1326, 1345 թվականներ: Եկեղեցու արևմտյան ճակատին քանդակված է Օրբելյանների տոհմանիշը: Եկեղեցուն կից տարածվում է փոքրիկ գերեզմանոց, որի գերեզմանաքարերը գլխավորապես ավազաքարից են. զանազան ձևի մշակումով: Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր, բոլորն էլ պատվանդաններով և գեղեցիկ ձևով քանդակազարդված: Դրանց վրա կան՝ 1283, 1291, 1310, 1413, 1435, 1649 թվականների արձանագրություններ: Հերհերի Ս.Սիոն անապատը (ամբողջական համալիրը նաև այսպես են անվանում) 13-14-րդ դդ. եղել է Շահուռնեցի իշխանների հոգևոր կենտրոնը և բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: 14-րդ դարում անապատի համալիրը նորոգել է ոմն Մեթարը: Կան վկայություններ նաև այն մասին, որ 1349թ. այստեղ Վահան գրիչը Ավետարանն է ընդօրինակել: Ընդ որում, Հերհերի վանքի պատերից մեկի վրա, ըստ երևույթին 13-րդ դարի դժվարընթեռնելի մի արձանագրություն կա, ըստ որի այդ ավանը նախկինում կոչվել է Առինջ:

Հերհերից հարավ պահպանվել են կիսավեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռը (1296թ.) և Սուրբ Գևորգ (Չիքի վանք, 1297թ.) փոքր եկեղեցին: Վերջինիս տարածքի հողը մինչև հիմա էլ հայտնի է մաշկային հիվանդություններ (էկզեմա) բուժելու հատկությամբ: Գյուղամիջում է գտնվում Սուրբ Գևորգ եկեղեցին (19-րդ դար), որը երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ է, իսկ գյուղից մոտ 1 կմ հարավ-արևելք, լեռան գագաթին՝ «Կապույտ» ոչ մեծ բերդը (13-14-րդ դարեր): Հերհերից 3 կմ հյուսիս, գյուղատեղիում պահպանվել է կիսամշակ բազալտով կառուցված եկեղեցու աբսիդը, որի մոտ՝ պատվանդանի վրա կանգուն են երկու քանդակազարդ տապանաքարեր: Գյուղում կան 10-15-րդ դարերի խաչքարեր, 2 կմ հարավ՝ գյուղատեղի և 3 կմ հյուսիս՝ գյուղատեղի: Հատկապես Հերհերի եկեղեցին, ինչպես նաև գյուղի սահմաններում պահպանված նյութական կուլտուրայի բազմաթիվ հուշարձանները հաստատում են որոշ բանասերների այն պնդումը, համաձայն որի՝ Հերհերի գյուղը հնում քաղաքատիպ ավան է եղել:

Քարավազի և Հերհերի ջրվեժները գտնվում են Հերհեր գյուղից վերև: Այս ջրվեժները բնության իրական հրաշք են: Քարավազի ջրվեժը գտնվում է Հերհեր գետի աջակողմյան վտակ Քարավազի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արևելք: Այստեղից էլ ծագել է նրա անվանումը: Ճեղքելով ժայռերը այն դուրս է գալիս՝ առաջացնելով սահանքային ջրվեժ: Այնուհետև Քարավազ գետը միանում է Հերհեր գետին և գահավիժում ցած՝ առաջացնելով երկրորդ ջրվեժը: Մյուսը՝ Հերհերի ջրվեժը գտնվում է Հերհեր գետի վրա, համանուն գյուղից 5 կմ հյուսիս: Ջրվեժը գահավիժող է, որի արդյունքում նրա տակ գոյացել է խորը ավազան, ուր կարելի է լողալ:

Կարմրաշեն

Կարմրաշեն (նախկինում՝ Քյոթանլի, Քյոթանլու) գյուղի հիմնադրման տարեթիվը ստույգ չէ: Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ: Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ-արևմուտքում խարաբաններ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին: Խաչքարերը վերաբերում են 10-13-րդ դարերին: Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենին է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղը: 1963 թվականին այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար: Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թվականից 1925 թվականը Նախիջևանի Բադամլու գյուղից ներգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով: Նույն շրջանում հարևան տարածքներից Կարմրաշեն են տեղափոխվել նաև ադրբեջանցիներ: 1988 թվականին գյուղի ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվեց Ադրբեջան, իսկ նրանց փոխարեն գյուղ ներգաղթեցին մեծ թվով ադրբեջանահայեր, որոնց մեծ մասը հետագա տարիներին տեղափոխվեց այլ բնակավայրեր: ՀՀ անկախությունից հետո գյուղի երիտասարդության նախաձեռնությամբ տեղանունները, որոնք ունեին թուրք-արաբա-պարսկական ծագում, վերանվանվեցին կարմրաշենցի ճանաչված և նշանավոր մարդկանց անուններով, այդ վայրերում կառուցվեցին հուշաղբյուրներ:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ջերմուկ

Ջերմուկը գտնվում է ծովի մակերևույթից 2080մ բարձրության վրա գտնվող ոչ մեծ սարահարթում, որը երկու մասի է բաժանվում Արփա գետի գեղատեսիլ կիրճով: Քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում, Վայոց ձորի մարզում, (պատմական Սյունիք նահանգի Վայոց ձորի գավառի տարածքում), մարզկենտրոնից 50կմ հյուսիս-արևելք, մայրաքաղաք Երևանից 173 կմ հեռավորության վրա:

Վարչական տարածքը՝ շուրջ 5.5 հազար հեկտար է: Երևանի հետ կապվում է երկու ավտոմայրուղիներով, որոնցից Ջերմուկ-Երասխ-Երևան մայրուղին ավելի կարճ է և կազմում է շուրջ 170 կմ: Քաղաքը Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց գտնվում է 24կմ հեռավորության վրա:

Քաղաքը շրջափակված է 2500-3000 մետր բարձրության հասնող լեռնաշղթաներով: Շրջապատն անտառապատ է: Անտառների մի մասը տնկել են 1980-1990-ական թվականներին:

Կեչուտ

Կեչուտ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, Արփա գետի վերին հոսանքում, նրա ձախ ափին: Գյուղի հեռավորությունը Ջերմուկ քաղաքից 3 կմ է, մարզկենտրոնից՝ 50 կմ, մայրաքաղաքից՝ 170 կմ: Կեչուտի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է փոքր-ինչ վերև: Նոր Կեչուտը մարզկենտրոնի, Ջերմուկի, մայրաքաղաք Երևանի և հարևան գյուղերի հետ կապված է բարեկարգ ասֆալտապատ ճանապարհներով: Գյուղն արևելյան կողմից սահմանակից է Սիսիանի շրջանին, հարավից՝ Գնդեվազին, արևմուտքից՝ Հերհերին, որոշ չափով նաև Կարմրաշենին, հյուսիսարևելյան մասից՝ Արցախի Քարվաճառ շրջանին: Ծովի մակարդակից բարձր է 2000 մ: Բնակավայրի վարչատարածքային միավորը կազմում է 50,613 կմ2 է:

Գնդեվազ

Գնդեվազ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, մարզկենտրոնից 35 կմ արևելք, Արփա գետի ձախակողմյան սարավանդի վրա՝ Երևան-Ջերմուկ նոր խճուղու ձախ կողմում, ծովի մակարդակից 1850 մետր բարձրության վրա: Գնդեվազի շուրջ բարձրացող ոչ բարձր լեռները նրա տեղը դարձնում են մի գեղեցիկ ամֆիթատրոն: Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 30 կմ, մայրաքաղաք Երևանից

հեռավորությունը 163կմ է: Ջերմուկ համայնքի կենտրոնից ուղիղ գծով հեռավորությունը 9 կմ է: Բնակավայրի վարչատարածքային միավորը 61.9124 քառ.կմ է: Սահմանակից բնակավայրերից է Կեչուտ գյուղը:

Հերհեր

Հերհեր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջակողմյան վտակ Հերհեր գետի միջին հոսանքի աջ կողմում: Գյուղի հեռավորությունը Ջերմուկ քաղաքից 10 կմ է, մարզկենտրոնից՝ 38 կմ, մայրաքաղաքից՝ 162 կմ: Ծովի մակարդակից բարձր է 1750 մ: Բնակավայրի վարչատարածքային միավորը կազմում է 155,486 կմ2:

Կարմրաշեն

Կարմրաշեն գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում՝ Վայոց լեռան ստորոտում, Հերհեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում: Գյուղի հեռավորությունը Ջերմուկ քաղաքից 7 կմ է, մարզկենտրոնից՝ 39 կմ, մայրաքաղաքից՝ 160 կմ: Ծովի մակարդակից բարձր է 2060 մ: Սահմանակից է՝ հյուսիս-արևելքից՝ Ջերմուկ քաղաքին, արևելքից՝ Հերհեր, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ գյուղերին: Բնակավայրի վարչատարածքային միավորը կազմում է 142,3354 կմ2:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	670-800
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-9
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+14 - +20

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) Ջերմուկ /համայնքի կենտրոն/	-
1.2) Կեչուտ	2
1.3) Գնդեվազ	9
1.4) Հերհեր	10
1.5) Կարմրաշեն	7
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ազիզբեկով
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	160-173
3.2) մարզկենտրոնից (կմ)	35-50
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	22-60
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	18-35
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	12-24
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	60-100

4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1750-2080	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	499.4053	49940.53
6.Սահմանակից համայնքների անվանումները	Զառիթափ, Վայք, Եղեգնաձոր, Գլաձոր, Եղեգիս	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	jermuk.vayotsdzor@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	jermuk.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093.07.07.77	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	0287.2.12.17, 060.74.70.77	
11.Համայնքի հեռախոսային կոդը	0287, 028793, 028293, 028297	
12.Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	3701	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	9276
2. Գրանցված ծնունդների քանակը	60
2. Մահացության դեպքերի քանակը	49
3. Ամուսնությունների քանակը	39
4. Ամուսնալուծությունների քանակը	5
5. Տնային տնտեսությունների թիվը	2293
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	247
7. Կենսաթոշակառուների քանակը	1358
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	407

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	4
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	2
5. Հանրակրթական դպրոցների քանակը	6
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0

8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	293578
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	139
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	455

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	49940.53
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	24931.36
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	661.01
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	2210
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2338
7. Խոզերի գլխաքանակը	452
8. Գյուղատնտեսական տեխնիկա	92
8.1 տրակտորներ (քանակը)	72
8.2 կոմբայններ (քանակը)	5
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	658

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	69
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	167.65
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	այո
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	28
6.2 Էքսկավատորների քանակը	6
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	7
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	3
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	4
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական	հանրապետական

նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	նշ. 17 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	3
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	456374.374	454117.68
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	79958.2	74932.93
2.1 հողի հարկ	21809	21287.98
2.2 գույքահարկ	51034.8	47812.45
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	104416.40	104416.40
3.1 դոտացիա	98848.80	98848.80
3.2 սուբվենցիա	4900.9	4900.9
4. Մուտքեր հողի օտարումից	546.981	41114.853

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	460664.30	448295.219

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	546.981	45649.837

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	250052.00	58200.895

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	37
1.1 համայնքային ծառայողներ	24
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	101677.5
3. Ավագանու անդամների թվաքանակը	11

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	**Ակնկալվող լուծումը**
Ջերմուկ	

-ասֆալտի բացակայություն և դրա քայքայված շերտ -գերեզմանատուն տանող ճանապարհի ասֆալտի բացակայություն և գերեզմանատան պարսպի բացակայություն	-ասֆալտապատում -ճանապարհի ասֆալտապատում և գերեզմանատան պարսպապատում
Կեչուտ -ասֆալտի շերտի բացակայություն -քայքայված կոյուղագիծ -քայքայված տանիքներ	-ասֆալտապատում -կոյուղագծի վերանորոգում -տանիքների վերանորոգում
Գնդեվազ -քայքայված կոյուղագիծ -ոռոգման ջրի ջրամատակարարման դժվարություններ	-կոյուղագծի վերանորոգում -ոռոգման ցանցի ընդլայնում
Հերհեր -գյուղմթերքի իրացման դժվարություններ -ոռոգման ջրի ջրամատակարարման դժվարություններ	-գյուղմթերք վերամշակող ձեռնարկությունների ստեղծում -ոռոգման ցանցի ընդլայնում
Կարմրաշեն -ճանապարհի անանցանելիություն, ասֆալտբետոնե շերտի բացակայություն -ջրատարերի մաշվածություն -գործազրկություն	-գրունտային լիցք, ասֆալտապատում -խողովակաշարի փոխարինում -աշխատատեղերի ստեղծում